«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Աշակերտների ներգրավումը դասապրոցեսին հարցադրումների մեթոդով

ԴՊՐՈՑ՝ Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Կարինե Թաթոյան

ՄԵՆԹՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Հասմիկ Պողոսյան

ԱՐՄԱՎԻՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ---------- 3

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ---------- 5

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ---------- 8

4. ԱՄՓՈՓՈՒՄ----------13

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------15

6. ՀԱՎԵԼՎԱԾ----------16

ՆԱԽԱԲԱՆ

Հասարակության զարգացման հիմնական պայմաններից մեկը բազմակողմանի, ներդաշնակ զարգացած անհատն է, որի ձևավորման մեծ բաժինն իր ուսերին է կրում դպրոցը: Աշակերտի շարունակական զարգացող ուսուցումը կազմակերպելու համար նախ պետք է մոտիվացնել նրան, ձևավորել և զարգացնել ուսման նկատմամբ դպրոցականի հետաքրքրասիրությունը, հիմնախնդիրը տեսնելու և լուծելու ցանկությունն ու հմտությունը՝ ապահովելով նրա համընդհանուր ներգրավվածությունը դասին: Դասապրոցեսի ընթացքում պետք է ստեղծել խնդրահարույց իրավիճակ, որից դուրս գալու համար միջոցներ և ձևեր մշակելուն պետք է փորձել ներգրավել բոլոր աշակերտներին: Ուսուցչի խնդիրն է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնք կհետաքրքրեն դասարանում գտնվող բոլոր աշակերտներին, անկախ նրանց ընդունակություններից: Տարբեր մեթոդներ գործադրելով՝ պետք է բարձրացնել աշակերտի ներգրավվածությունը դասերին, ոգևորել պասիվ երեխաներին:

Յուրաքանչյուր ուսուցիչ, եթե նպատակ ունի վարել արդյունավետ դաս և ունենալ շոշափելի արդյունքներ, դասարան մտնելուց առաջ պետք է պլանավորի իր անելիքները, հստակեցնի վերջնարդյունքներին հասնելու ճանապարհը: Խիստ կարևոր է հաշվի առնել բոլոր սաների կարողություններն ու հետաքրքրությունները, ինչպես նաև պատրաստ լինել հաղթահարելու անակնկալ խոչընդոտները:

Հաճախ ուսուցիչներն իրենց մանկավարժական գործունեության ընթացքում առնչվում են ամբողջ դասարանը դասին ներգրավելու խնդրին: Աշխատանքային գործունեության ընթացքում ես նույնպես երբեմն բախվում եմ այդ խնդրին: Դասարանները սովորաբար բաղկացած են լինում ուսումնառության նկատմամբ տարբեր հետաքրքրություններ ցուցաբերող աշակերտներից, ինչը զգալի բարդացնում է ուսուցչի գործը:

Դասավանդման ընթացքում ինձ համար կարևոր է դասապրոցեսին բոլոր սաներին ներգրավելը և ակտիվ մասնակից դարձնելը, քանի որ գիտելիքների և կարողությունների ձեռքբերման համար անհրաժեշտ է, որ բոլոր աշակերտները ներգրավված լինեն ուսումնառության գործընթացում:

Գրեթե բոլոր դասարաններում դասին աշակերտների ներգրավվածության խնդիր կա:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում ես դասավանդել եմ տարբեր դասարաններում, ուսուցանել եմ զարգացվածության տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների, մշտապես փորձել եմ գտնել աշակերտներին մոտիվացնող, ակտիվացնող ու զարգացնող մեթոդներ, որոնց միջոցով կկարողանամ ապահովել նրանց համընդհանուր ներգրավվածությունը դասին:

Երբեմն, որքան էլ կատարում եմ նախապատրաստական քայլեր, դասապրոցեսի ընթացքում կիրառում եմ տարբեր մեթոդներ, օգտագործում զանազան դիդակտիկ պարագաներ, այնուամենայնիվ, դասարանում լինում են աշակերտներ, որոնք ակտիվորեն չեն ներգրավվում դասապրոցեսին:

Հետազոտությամբ փորձելու եմ պարզել, թե հարցադրումների մեթոդը որքանով է նպաստում դասին աշակերտների ներգրավվածության բարձրացմանը, ցույց տալ այս գործիքի կիրառման առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Դասը պետք է վերածել ստեղծագործական գործընթացի, այն դարձնել նախորդներց տարբերվող, չկրկնվող: Դասագրքի յուրաքանչյուր պահանջ կարելի է լրացնել, դարձնել ավելի հետաքրքիր: Բոլոր ուսուցիչներն էլ ցանկանում են ունենալ մոտիվացված, հետաքրքրասեր, դատող աշակերտներ: Ուսուցչի դերը ճիշտ ճանապարհ ցույց տալն է, աշակերտին մտածել սովորեցնելը: Եվ պատահական չէ, որ ուսուցչի կողմից ճիշտ ճանապարհով առաջնորդվող աշակերտները հաջողությամբ ներգրավվում են դասին:

Հետաքրքիր ու խնդրահարույց իրավիճակներ ստեղծելու, աշակերտներին ճիշտ մոտիվացնելու դեպքում դասարանում անտարբեր աշակերտներ չեն մնում: Իհարկե ոմանք երբեմն կարող են տալ անընդունելի պատասխաններ, բայց այս դեպքում կարևորն այն է, որ դպրոցականը ներգրավված է դասապրոցեսին, իսկ սխալ պատասխանները պարզաբանվում , վերլուծվում են ընկերների և ուսուցչի կողմից:

Ներգրավվածության սահմանումը մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակներ սահմանել են տարբեր կերպ:

Ներգրավվածությունը աշակերտների ժամանակի և ջանքերի ներդրումն է այնպիսի գործողություններում, որոնք էմպիրիկ ձևով կապված են կրթական կառույցների կողմից սահմանված ցանկալի արդյունքների ձեռքբերմանը (Կուհ, 2001,2003, 2009թ):

Ներգրավվածությունը աշակերտների ջանքերի որակն է, որը նրանք տրամադրում են կրթական նպատակներ ունեցող գործողությունների կատարմանը, և որոնք ուղղակիորեն նպաստում են ցանկալի արդյունքների ձեռքբերմանը (Կռաուս և Կոատես, 2009թ):

Ներգրավվածությունը ավելին է, քան պարզապես մասնակցությունը: Այն պահանջում է որոշակի զգացողություններ, իմաստավորում, ինչպես նաև գործողություն (Հարպեր և Կոյե, 2009թ): Գործողություններն առանց զգացողությունների պարզապես մասնակցություն է կամ համաձայնություն, իսկ միայն զգացողություններն առանց

գործողությունների՝ դիսոցացիա (անջատում, բաժանում) (Սեմուել Բլումենֆելդ և այլոք, 2004թ):

Այս հեղինակներն իրենց աշխատության մեջ ներգրավվածությունը սահմանում են երեք չափանիշներով.

1. Բիհեյվորիստական (վարքագծային) ներգրավվածություն

Աշակերտները վարքագծային տեսանկյունից ներգրավված են, եթե համապատասխանում են վարքագծային նորմերին, ինչպիսիք են ներկայությունը և մասնակցությունը, և չեն դրսևորում խանգարող և նեգատիվ վարքագիծ:

2. Էմոցիոնալ ներգրավվածություն

Էմոցիոնալ տեսանկյունից ներգրավված աշակերտները ունենում են աֆեկտիվ զգացողություններ, ինչպիսիք են հետաքրքրությունը, հաճույքը կամ պատկանելության զգացումը:

3. Կոգնիտիվ (ճանաչողական) ներգրավվածություն

Կոգնիտիվ ներգրավվածության ժամանակ աշակերտները շահագրգռված են իրենց ուսումնառությամբ, ձգտում են կատարել ավելին, քան պահանջվում է, և հաճույք են ստանում մարտահրավերներ հաղթահարելուց:

Դասին աշակերտների ներգրավվածության պակասի պատճառները տարբեր են՝ անհրաժեշտ նախնական գիտելիքների պակաս, անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, ուսումնասիրվող թեման կամ առարկան բարդ է թվում սովորողին, նա անհարմար է զգում չհասկացածը հարցնել, վախենում է սխալվել, մտքերը առարկայական լեզվով ճիշտ չի կարողանում ձևակերպել, հաճախակի բացակայում է, հետաքրքրություն չունի առարկայի և ընդհանրապես սովորելու նկատմամբ, առողջական կամ այլ խնդիրներ:

Դասին աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար հաճախ են ուսուցիչները կիրառում հարցադրումների մեթոդը: Հարցերը կիրառվում են թե՛ գրավոր, թե՛ բանավոր կերպով. կարևոր են հատկապես բանավոր հարցադրումները: Կրթության մի շարք փորձագետներ, այդ թվում բազմաթիվ փորձառու և հմուտ ուսուցիչներ, կարծում են, որ բանավոր հարցադրումներն ուսուցչի ամենաազդեցիկ գործիքներից են: Հարցադրումների մեթոդը սովորեցնում է աշակերտներին ինքնուրույն մտածել:

Շատերը կհամաձայնեն, որ հարցադրումների մոտեցումն աշակերտների համար

ավելի հետաքրքիր է. նրանք պասիվ լսելու փոխարեն ակտիվ ներգրավված են, բացի դրանից հարցադրումների ոճը միտված է խթանելու աշակերտների հետաքրքությունը: Հարցադրումների ոճով դասի ընթացքում շեշտը դրվում է հասկանալու, ոչ թե պարզապես իմանալու վրա: Պատմելու վրա հիմնված դասի ընթացքում աշակերտներին պարզապես ասվում է այն, ինչը նրանք պետք է իմանան. նրանց չեն դրդում հասկանալ, և քիչ հավանական է, որ նրանք մտապահեն ասվածը: Նաև հարցադրումներ կիրառող ուսուցիչն աշակերտների ընկալման վերաբերյալ վայրկենական հետադարձ կապ է ստանում, իսկ դասն առաջ է ընթանում:

Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, բոլոր աշակերտներին դասին ներգրավելու համար, ի հայտ է գալիս ևս մեկ էական առավելություն: Աշակերտները հասկանում են, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը, երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և անմիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Այսպիսով՝ հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելություններն են՝

• աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է

• աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ուսուցչի հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը

• վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)

• մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում

• անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը

• կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար

• թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը

• խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Թերություններն են՝1. հարցադրումների մոտեցումը. կարող է ժամանակատար լինել, 2. երբեմն դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը, 3. հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դասարանին հեշտ մոտիվացնելու, բոլորին դասապրոցեսին մասնակից դարձնելու, ներգրավելու համար կարևոր է, որ դասագրքային նյութը, դասարանում կատարվող առաջադրանքները հետաքրքրեն բոլորին: Կրթության ոլորտն այնքան արագ է փոխվում, որ ուսուցիչը պետք է հարմարվի ավելի ժամանակակից ռազմավարություններին: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ դասի արդյունավետությունը կախված է ամենից առաջ դասի ընթացքի ճիշտ պլանավորումից: Եթե դասի քայլերի հաջորդականությունը լինի հստակ մշակված, ապա սովորողները կիմանան իրենց անելիքները և ձանձրանալու ժամանակ չեն ունենա: Դասը պլանավորելու և նախատեսված բոլոր նյութերը պատրաստ ունենալու համար կան բազմաթիվ արդյունավետ մեթոդներ, որոնցից ես ընտրել եմ հարցադրումների մեթոդը՝ աշակերտների համընդհանուր ներգրավվածությունը դասին ապահովելու նպատակով:

Հետազոտությունն իրականացրել եմ Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցի VIII դասարանում: Դասարանում սովորում է 22 աշակերտ, որոնք ուսումնառության հանդեպ ցուցաբերում են տարբեր հետաքրքրություններ: Դեռ նախորդ ուսումնական տարվանից էի նկատել, որ դասարանում առկա է դասին սովորողների ներգրավվածության խնդիր: Հետազոտությամբ փորձելու եմ պարզել՝ հարցադրումներով դասավանդումը նպաստում է դասին սովորողների ներգրավվածության մեծացմանը:

Դասի թեման էր Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը: Պատմելով դասավանդելու փոխարեն դասն անցկացրել եմ հարցադրումների մեթոդով: Սունդուկյանի ստեղծագործության ընդհանուր բնութագրին ծանոթանալիս աշակերտներն իմացան, որ «Պեպո» կատակերգությունը գրված է Թիֆլիսի բարբառով, որն անհասկանալի է աշակերտներին: Եւ որպեսզի նյութը հետաքրքրի նրանց, ընթերցելիս

էլ հասկանալի լինի, սովորողներն հանձնարարեցի աշխատել զույգերով, սկսել նախապես ծանոթանալ, գտնել իրենց հանձնարարված բառերի շարքի իմաստը դասագրքի բառարանի օգնությամբ: Զույգերով աշխատանքը աշակերտներին թուլ է տալիս ստուգել իրենց պատասխանները ընկերոջ հետ, ավելացնում է նաև վստահությունը և հարցերին պատասխանելու պատրաստակամությունը: Զույգերով աշխատանքից հետո 4-5 հոգանոց խմբերով իրենց սովորածը հարցրին ու միաժամանակ սովորեցրին դասընկերներին: Հարցադրումների մեթոդով աշակերտները լսեցին իրենց ընկերների պատասխանները և նոր գիտելիքներ ձեռք բերեցին, կարդացին բնագրի որոշ հատվածներ, պատասխանցին տրված հարցերին, ինչ էլ չէին հասկացել, հարցերի պատասխանների շնորհիվ սովորեցին: Դասընկերներին սովորեցնող աշակերտն ավելի լավ է սովորում, քանի որ սովորելու արդյունավետ ձևերից մեկը սովորեցնելն է (Ս. Խաչատրյան):

Հաջորդ դասին էլի 4-5 հոգանոց խմբերը ստացան տանը ընթերցած հատվածի վերաբերյալ տարբեր հարցեր, որպեսզի խմբում պասիվ անդամներ չլինեն, և բոլոր անդամները պատրաստ լինեն խմբի աշխատանքը ներկայացնելուն, նախապես տեղեկացրի, որ ես եմ որոշելու, թե խմբի աշխատանքն ով է ներկայացնելու: Նկատեցի, որ խմբի լավ սովորող աշակերտները փորձում են իրենց իմացածը սովորեցնել դասընկերներին, որպեսզի իրենց խումբը լավ ներկայանա: Որոշ հարցերի դեպքում հնարավորություն էի տալիս, որ խմբի անդամներն ընտրեն պատասխանողին: Սկզբում ավելի պարզ հարցեր էի ընտրել, խրախուսում էի բոլոր ճիշտ պատասխանները, իսկ սխալ պատասխանի դեպքում փորձում էի այլ հարցի միջոցով ճիշտ ուղու վրա դնել աշակերտին:

Խմբային քննարկումները տևում էին մի քանի րոպե Հարցադրումների պատասխանները ներկայացնելիս խմբի անդամները հնարավորություն էին ստանում լրացնել իրենց խմբակցի պատասխանը, ասել բացթողումները:

Հետազոտական երկրորդ դասի սկզբում, երբ հարցերով անդրադարձ էի կատարում նախորդ դասին, հարցերին պատասխանողների թիվը զգալի շատացել էր: Այս դասին նույնպես աշակերտները ստացան նոր հարցադրումներ, բայց արդեն ավելի լավ էին պատկերացնում աշխատանքը և ավելի լավ ու անաղմուկ էին աշխատում: Աշակերտները նոր գիտելիքը կառուցում էին արդեն ունեցածի վրա, ակտիվ աշխատում էին և քննարկում:

Հարցերի մեջ ներառել էի և՛ բաց, և՛ փակ հարցեր:

Ո՞ր բառի բացատրությունն է սխալ նշված։
խասիաթ - բնավորություն
դուրթ – սխալ
սհաթ – պահ, ժամ, ժամանակ

Ի՞նչ մասնագիտություն ուներ Պեպոն։

Ի՞նչով էր զբաղվում Արութին Զիմզիմովը։

Ո՞վ էր Արութին Զիմզիմովի կինը:

Ի՞նչ է ներկայացնում Սունդուկյանը «Պեպո»-ի երկրորդ արարվածում:

Ինչպե՞ս էր էփեմիան նախապատրաստվում հյուրընկալության։

Ինչպե՞ս է Էփեմիան Արութինին հայելիները գնել տալիս։

Մեկնաբանել Պեպոյի այցը Արութինի տուն և պահանջը։ Ի՞նչ պահանջ է ներկայացնում Պեպոն Արութինին:

Ի՞նչ է հրահանգում Էփեմիան Սամսոնին։ Բնավորության ո՞ր գիծն է ակնհայտ երևում այս հրահանգի ժամանակ։

Կարո՞ղ ես նկարագրել Արութին Զիմզիմովի տունը։

Որքա՞ն գումար է առաջարկում Արութինը Պեպոյին։

Ի՞նչ պատասխան է տալիս Արութինը Պեպոյին:

Պեպոյի գնալուց հետո ի՞նչ են խոսում Արութինը և Էփեմիան:

Ինչի՞ մասին էր մենախոսում Արութինը:

Ո՞ւմ արձանն է կանգնեցված Մայր թատրոնի բակում:

Ներկայացնել ընդհանուր տեղեկություն «Պեպո»ի մաս ին

Նկարագրել Արութինին ու Էփեմիային:

Բաց հարցերը օգնում են աշակերտներին մտածել, իսկ ինձ ավելի շատ տեղեկություններ են հաղորդում աշակերտների սովորածի վերաբերյալ: Որոշ հարցեր էլ պարզապես փաստերի վերհիշում են պահանջում: Այսպիսի հարցերը ամրապնդում են նախկինում սովորածը, մարզում հիշողությունը, տեղեկացնում՝ ինչ են մտապահել: Հարցադրումների միջոցով կարելի է գրավել նաև անուշադիր աշակերտներին:

Հետազոտության վերջին դասի ընթացքում աշակերտներն ավելի լավ էին աշխատում: այս դասին բացի խմբային հարցադրումներից, կատարեցի նաև անհատական հարցադրումներ, որոնց միջոցով փորձեցի պարզել թեմայից ստացած գիտելիքները: Այս անգամ հարցադրումների պատասխանները գրի էինք առնում գրատախտակին: Հնչած գաղափարները գրատախտակին քարտեզագրելուց հետո դասարանում կազմակերպեցինք ակտիվ քննարկում անհասկանալի մնացած հարցերի շուրջ, քննարկեցինք բոլոր տարաձայնությունները մինչև վերջնական համաձայնեցված պատասխան ունենալը: Դասարանի ընդհանուր պատասխանին հավելեցի նրանց կողմից բաց թողած լրացուցիչ տեղեկություններ ստեղծագործության վերաբերյալ, շտկեցի թյուրըմբռնումները: Դասի վերջում միմյանց հարցեր տալու իրավունք ընձեռեցի նաև

աշակերտներին: Փորձում էի ներգրավել բոլորին: Աշակերտները բավականին ոգևորված և ներգրավված էին դասին:

Փոխադարձ հարցերի միջոցով ամփոփեցինք դասը, պարզաբանեցինք նաև անհասկանալի հարցերը, որոնք առաջացել էին դասի ընթացքում: Ապա դասի ավարտից հետո աշակերտներին բաժանեցի ելքի քարտեր, որոնց միջոցով փորձեցի հասկանալ, թե որքանով է յուրացվել ուսուցանվող նյութը: Ելքի քարտեր աշակերտները լրացրել էին նաև նախորդ դասերի վերջում: Այս անգամ ելքի քարտերում ավելի շատ աշակերտներ էին գրել, որ դասը իրենց համար հետաքրքիր էր:

Ելքի քարտերի հաճախակի կիրառման արդյունքում սաները դառնում են ավելի ուշադիր և հետևողական, քանի որ գիտեն՝ դասի վերջում պետք է կարողանան ներկայացնել՝ ինչ սովորեցին, ինչն էր հետաքրքիր կամ անհասկանալի և այլն:

Դասին աշակերտների ներգրավվածությունը չափելու համար հրավիրել էի դասադիտարկողներ, ովքեր հետևեցին աշակերտների աշխատանքին բոլոր հետազոտական դասերի ընթացքում և լրացրին դասալսողի ձևաթղթեր: Նրանց լրացրած տվյալներում նույնպես նկատելի էր դասին աշակերտների ներգրավվածության աճը:

Ավարտելով փորձարարական դասը՝ կարող ենք փաստել, որ այն արդյունավետ մեթոդ է աշակերտների ներգրավվածությունը դասին ապահովելու համար

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսուցիչների մեծ մասի համար խնդիր է դասապրոցեսին սովորողների ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը ապահովելը, քանի որաշակերտները խիստ տարբեր են, տարբեր կարիքներ ունեն, դա բոլորին է հայտնի: Խնդրի առկայությունը ընդունում են նաև իրենք՝ սաները:

Երբ ուսուցիչները նախապես հստակեցնում են իրենց առջև դրված նպատակները և պլանավորում են բոլոր քայլերը, դասի ընթացքում կիրառում են կրթական գործիքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տարբեր ակտիվացնող մեթոդներ, սաներին դասը հետաքրքրում է, նրանք ակտիվ ներգրավվում են և դառնում կրթական գործընթացի լիարժեք մասնակիցներ:

Դասավանդման ընթացքում կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ սովորողների ներգրավվածությանը նպաստող և լիակատար մասնակցությունն ապահովող միջոցներից մեկն էլ հարցադրումների մեթոդն է: Իսկ ներգրավվածության վրա անմիջական բացասական ազդեցություն ունի աշակերտի բացակայությունը:

Հարցադրումների մեթոդի կիրառումը շատ կարևոր է: Այն ստիպում է աշակերտներին ինքնուրույն մտածել և ստեղծում է փոխանցելի գիտելիք, իսկ ուսուցիչներին հնարավորություն է տալիս գիտելիքը ստուգել և շտկել: Հարցադրումների շնորհիվ ուսուցիչները ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ:

Աշակերտների համար հարցադրումներով ուսուցումը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, քանի որ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զգացողություն են պարգևում: Նույնիսկ այն աշակերտները, որոնք անձամբ չեն պատասխանում, բայց ինքնուրույն գտնում են ճիշտ պատասխանը, վստահություն են ձեռք բերում: Այս վստահությունն ու հաջողությունը՝ գովասանքի և հավանության ուղեկցությամբ, մոտիվացիայի առաջ մղման պատճառ են հանդիսանում: Իսկ ուսուցչի համար հարցադրումների մեթոդը մի փոքր փորձառությունից հետո բնականոն երևույթ է դառնում:

Ցանկացած աշակերտ, որը հաջողություն է գրանցում, ոգևորվում է, և դա ներգրավվածության կարևոր պայմաններից է: Հարցադրումների շնորհիվ առավել մատչելի

ու դյուրին է դառնում նոր նյութի յուրացումը, զարգանում են սովորողների մի շարք կարողություններ, հատկապես մտածելու և տրամաբանելու ունակությունները, բարձրացնում է ուսման արդյունավետությունը: Եթե անգամ սովորողները տալիս էին հնչած հարցի կեսը, դա խնայում էր իմ խոսքը: Այս մեթոդն առաջացնում է հետաքրքրություն և զարգացնում մտածողության հմտությունները:

Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող եմ եզրակացնել, որ հարցադրումները նպաստեցին սովորողների՝ դասին ներգրավվածության մեծացմանը: Այն աշակերտները, ովքեր նախկինում հարցերին չէին պատասխանում, հարցեր չէին տալիս կամ խուսափում էին իրենց կարծիքը հայտնելուց, հիմա ավելի վստահ են արտահայտվում: Հարցադրումներով ուսուցումը կիրառեցի 8-րդ դասարանում աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով; արդյունքը գոհացնող էր: Թեմայի ավարտին աշակերտները թեմատիկ գրավոր աշխատանքը գրեցին առանց դժվարության; Եվ, եթե մինչ այդ դասարանի մի մասն էր մասնակցում դասին, մի մասը՝ մասամբ, մի մասն էլ ընդհանրապես չէր մասնակցում, անտարբեր էր, ապա հարցադրումներով ուսուցման ժամանակ սկսում էր ներգրավվել դասին:

Ավատելով փորձարարական դասը՝ կարող եմ փաստել, որ հարցադրումներով ուսուցումը արդունավետ մեթոդ և կիրառելի գործիք է աշակերտների ներգրավվածությունը դասին ապահովելու համար: Հարցադրումներով ուսուցումը անհատական և խմբային ձևերով փորձեցի և համոզվեցի, որ երկու դեպքում էլ արդյունավետ է՝ կախված դասի նպատակներից և բովանդակությունից: Համոզվեցի նաև, որ հարցադրումներով ուսուցումը ունի ավելի շատ դրական, քան բացասական կողմեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ամիրջանյան,Ա. Սահակյան« Մանկավարժություն, Երևան, 2004:

2. Ջեոֆֆ Փեթթի« Առանց պատմելու դասավանդման 25 եղանակ, 2002:

3. Ջեոֆ Փեթթի, Դասավանդումն այսօր, Հարցադրումների մեթոդի առավելությունները, 2006:

4. Սերոբ Խաչատրյան«Կամուրջներ պատերի փոխարեն, Երևան, 2014:

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան

Ամիս-ամսաթիվ՝ 08.09.2023թ.

Ուսուցչուհի՝ Կ. Թաթոյան

Դասարան՝ 8-րդ

Առարկա՝ գրականություն

Դասի տևողություն՝ 45 րոպե

Թեմա՝ Գաբրիել Սունդունդուկյանի «Պեպո» կատակերգությունը

Նպատակ՝ նպաստել բանավոր կերպով գրական ստեղծագործության հեղինակի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի իմացությանը, գրական բնագիրն ընթերցելու, գրական երկը հասկանալու, կարծիք հայտնելու, հարցերին պաասխանելու կարողությունների ձևավորմանը:

Վերջնարդյունք՝ կկարողանա համառոտ ներկայացնել գրողի կենսագրությունն ու ստեղծագործության բնութագիրը, ընթերցել գրական բնագիրը, բացատրել անծանոթ բառերը, պատասխանել հարցերին վերարտադրել ընթերցած հատվածի բովանդակությունը:

Ուսումնական մեթոդներ՝ մտագրոհ, հարցադրումների մեթոդ, խթանող հարցեր, բացատրական ընթերցանություն:

Դասի կահավորում՝ դասագիրք, բառարան, բառատետր, գրականության տետր, քարտեր

Դասի ընթացք՝ խթանման փուլում մտագրոհի միջոցով ակտիվացնել սովորողների ուշադրությունը, ստուգել գրողի կենսագրության, ստեղծագործության բնութագրի վերաբերյալ գիտելիքների չափը, պատասխանները գրառել գրատախտակին և գրականության տետրերում:

Իմաստի ընկալման փուլում բաժանել քարտեր, հանձնարարել աշխատել զույգերով, գտնել հանձնարարված բառերի շարքի իմաստը դասագրքի բառարանի օգնությամբ: Հարցադրումների մեթոդով լսել պատասխանները: Զույգերով աշխատանքից հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի, հանձնարարել ուսումնասիրել դասագրքի նշված հատվածը, քննարկել, պատասխանել իրենց խմբին հանձնարարված հարցերին:

Կշռադատման փուլում յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ պատասխանում է հարցին, մյուսները լրացնում են բացթողումները:

Անդրադարձ՝ հարցերի տեղատարափով ամփոփել և ամրակայել դասանյութը:

Գնահատում՝ միավորային գնահատում:

Տնային հարնձնարարություն՝ ընթերցել տեսիլ ԺԵ-ԺԷ: